

Վ Ե Հ Ա Փ Ա Ռ Տ Լ Ր

Յարգելի հանդիսակազմներ,

Կովկասի Հայոց Բարեգործական Ընկերութիւնը քաղցր պարտականութիւն է դրել խորհրդի անդամներ՝ պ. Կ. Խալաթեանի և ինձ վրայ այսօր Համազգային այս Մեծ Յօռելեանի օրը, թարգման լինել Ընկերութեան և նրա 62 ճիւղերի այն նուիրական զգացմունքների, որ առաւում է Ընկերութիւնը Հայ ժողովրդի քաղաքակրթութեան այս Մեծ տօնին:

Հայկական տասերի գիւտի 1500-ամեակը և սպազբութեան 400-ամեակը ոչ միայն Հայկական տօն պէտք է համարել, այլ և համամարդկային, քանի որ տասերի գիւտի հորհիւ քրիստոնէութիւնը իւր արմատ ձգելով արեւելքի մի անկիւնում — Հայաստանում, Հայ ժողովուրդը միջոց ունեցաւ ազնիւ գաղափարների քարոզիչ դասնալ իրան չըզպատուող ազգերի մէջ, որով սկսեց քաղաքակրթութեան (գարգացման) համար հող պատրաստել: Նոյն գիւրը Հայ ժողովուրդը կատարում է և այսօր, որի համար նա թէ՛ հնում և թէ՛ այժմ առել է և ապիս է բազմաթիւ զոհեր:

Մակաչն արեւելքում մեր նախնիքների կատարած այդ մեծ գիւրը մեզ չպէտք է չլսցնել և մոռայնել ապ, որ մենք չենք կարողացել հարկաւոր չափով օգտուել ս. Մեսրոպի այն Մեծ գիւտից, որի 1500-ամեակը տօնելու գանազան տեղերից ժողովել ենք այստեղ, ս. Մեսրոպի գերեզմանից ոչ այնքան հետու:

Ինչ ենք արել մենք գրագիտութիւնը Հայ ժողովրդի մէջ լայն չափով տարածելու համար, որով արժանաւայել կերպով իրագործած լինելիք ս. Մեսրոպի մեզ թողած աւանդը, եթէ չսանք՝ սչինչ, համարձակ կարող ենք ասել, որ շատ քիչ ենք արել:

Կովկասի Հայոց Բարեգործական Ընկերութիւնը 1908 թուին, երբ նա վերակազմուեց, կամենալով ի մօտոյ ծանօթանալ Հայ գրագիտութեան չափի և մեր եկեղեցական-ժխական դպրոցների հետ՝ տեղեկութիւններ ժողովեց, որից երևաց՝ որ կան ամբողջ հայաբնակ շրջաններ, ուր 20-25 հայ գիւղերից հազիւ 2-3-ի մէջ կան ժխական դպրոցներ՝ շրջաններ՝ 40-50 հայաբնակ գիւղերով, որոնցից միայն 5-6 գիւղի մէջ կան ժխական միադասեան դպրոցներ, այն ես ոչ բարեկարգ գրութեան մէջ զբուած, այսպիսով ընդհանուր պատկերն այն էր, որ Կովկասի հայերի մէջ գրագիտութիւնը

նչ միայն բաւարար դրութեան մէջ չէ, այլ շատ անմխիթար դրութեան մէջ է գտնուում Գրադէտներէ թիւը 0_0^0 0_0^0 -ի վերածելով երևաց, որ արական սևոի մէջ հազիւ 4-5 0_0^0 -ը է միայն գրադէտ, իսկ իզական սևոի մէջ՝ 2-3 0_0^0 -ը: Ահա այս էր հայի գրագիտութեան իսկական պատկերը 1908 թուին: Եւ այսօր, որ 5 տարի է միայն անցել այդ թուականից, ինչ խօսք՝ որ զգալի փոփոխութիւն լինել չէր կարող: Այդ էր պատճառը, որ Կ. Ն. Բ. Ընկերութիւնն իւր գործունէութեան գլխաւոր ուղղութիւնը զարձրեց Հայ ժողովրդի մէջ գրագիտութիւն սարածելու գործին. այդ նպատակով Ընկերութիւնը գրամական օժանդակութիւնը է տալիս մեր եկեղեցական-ձխական դպրոցներին և նպաստում է օգնութեան կարօտ հայ ուսուցիչ-ուսուցչուհիներին իր հիմնած ուսուցչական ֆօնդից:

Կ. Ն. Բ. Ընկերութիւնը տեսնելով իր վերօրչեալ փայլալայած գաղափարի լայն իրագործումը, այսօր գալիս է լիաբերան և սրտաբուզի կերպով իւր շնորհաւորութիւնները յայտնելու Չեզ, ՎեՆԱ-ՓԱՌ ՏԷՄ, և ս. էջմիածնի միաբանութեան այն ազգօգուտ գործի համար, որ Համաօգային այս Մեծ տօնը յաւերժացնելու համար ձեռնարկել էք. այն է կազմել «դպրոցական ֆօնդ» եղած կարօտ Հայ եկեղեցական-ձխական դպրոցներին օգնելու նիւթականապէս և նորերը բանալու նպատակով:

Հաւատացած եղէք, ՎեՆԱ.ՓԱՌ ՏԷՄ, որ Հայ ժողովուրդն իւր առատածնուն նուէրներով կաջակցէ Չեզ իրագործած տեսնել այդ վեճ ձեռնարկութիւնը, որը պէտք է նրա ապագայ մարդավայել գոյութեան հիմքը կազմէ:

Սարգիս Մելիքեան: